

1. Լիզինգառուի կողմից պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում Վարկային կազմակերպությունը կարող է պահանջել Լիզինգի գումարի և հասանելիք տոկոսների վաղաժամկետ մարում:
2. Տույժի դեպքում լիզինգառուն պարտավորվում է վճարել ներքոհիշյալ 4-րդ կետով սահմանված չափի տույժ՝ հաշվարկված չկատարված դրամային պարտավորությունների նկատմամբ:
3. Լիզինգառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու նպատակով լիզինգառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում պարտավորությունների մարումը կարող է իրականացվել լիզինգառուի այլ գույքի հաշվին:
4. Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ՝ 0.2 տոկոսի չափով:
5. Տույժի հաշվարկման պահից սկսած, այն գումարի վրա, որի նկատմամբ հաշվարկվում է տույժը, պայմանագրով սահմանված տոկոսների հաշվարկը դադարում է:
6. Վարկային կազմակերպության կողմից կարող է լիզինգառուի գրավադրած գույքը վարկառուի կողմից վարկի մարումները ուշացնելու կամ լիզինգը չմարելու պատճառով առգրավվել դատական կամ արտադատական կարգով:
7. Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամկետին չվճարելու դեպքում հաճախորդի մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում: